ԿՈՂԲԱՑ ԱՂԱՀԱՆՔՆ

Նախընթաց թերթին մէջ (1889 Դեկտ. էջ 390) կողբայ աղաղահանքին վրայ արտաքին և ընդհանուր տեղեկութիւններ տալով, ներկայիս կը հրաւիրենք զընթերցողս՝ ուրիշ առաջ հեղինակի մի աւելի նորդուխթամբ՝ յերեկոյեան տեսիլ նոյն աղահանքին։

Ահաւասիկ. բնութեան օգտեմ սպասարկուներն կը փութան սքողել արշնաթոյր վարագուրով երկնից ահագին կամարը, ուր կը փայլին միայն գիշերոյ անքուն աչկունքն՝ արծաթափայլ ճառագայթներով, չթողլով որ լուսինն իւր տժգոյն և ընդարձակ պայծառութիւնովն նուազեցնէ սոցա գեղեցկութիւնը։ Ո՜հ, ինչ հիանալի գիշեր էր. այն խաղաղ և մթին համագոյքն կը ներկայացնէր մեր աչաց առջև ճիշդ ապակուոյ հաստուածակողման գեղեցիկ փոքրը, երկնից անթիւ լուսաւոր նշոյլներու գեստոց և լճակաց մաքուր հայելւոյն մէջ անդրադառնալով։ Դարձեալ մէկ մի աչքերնիս ալեկոծմը ձգուած լերանս մութ կողին վրայ, ուր գիշերուան խաւարին մէջ գեղեցիկ կը ծածանին բազմաթիւ աղային փորուածքն, ցոլացնելով ատեղաց պայծառ լոյսը իրենց ջինջ սպիտակութեամբ, և յիշեցնելով գիտողաց Վենետկոյ հռչակաւոր ջահաւորեալ ծովափունքը, իրենց զանազան կերպարանքք և այլևայլ բարձրութեամբք։ Անդ հարաւային կողմը կառուցուած երկայն աղալից ամբարները տարածելով իրենց ընդարձակ ստուերն լերանս անհաւասար բարձրութեանց վերայ, կը ներկայացնեն թաւ անտառի մի ահաւոր տեսարանը, նման Տանդէի նկարագրած սարսափելի անտառին։

Արդարև կախարդի՛չ տեսիլ. որ կողմը դառնալ և չաչքիլ չհիանալ. ցանուած են առջևնիս գեղեցիկ երեսը ազի մանր բեկորներ, որք իրենց փալփլուն տեսքովն կը թուին յիշեցնել մեզ նոխ հռովմայեցւոյն կրասոսի պալատան ոսկեցան և արծաթասիւռ յատակը։ Այլ ևս ի՞նչ ըսեմ. անկարելի է բոլոր զգացումներս բացատրել այս մի քանի տողերուս մէջ. այլ այսչափ միայն ըսեմ, որ չէ կարելի գտնել աշխարհիս վրայ սիրտ մի թէպէտ անկրօն և ամբարիշտ, որ գիշերուան անպատմելի տեսարանը դիտելով չյուզուի և չվկայէ թէ կայ յիրաւի մէկն, որ այս ամէն բաներս ստեղծէ։

Ու այժմ՝ կը թողում զքեզ միայնակ, սիրելի ընթերցող, բնութեան տեսարանիս հրաշալի երևութից ներքև. ահաւասիկ և լերան չոչոչուն փոսերուն տեսուչ Ֆ. Ի. Վեղիրով երկրաչափի տան պատուհանքն ևս խաւարեցան, անցուդարձերն դադրեցան, ամենայն ոք կը փութայ՝ ուրախ կամ տխուր՝ ամփոփիլ իւր յարկաց մէջ։ Վաղիւ կը յուսամ դեռ աւելի 'ի մօտոյ դիտել վերոյիշեալ լերան վրայ գտնուած աղահանքը։

* * *

Աւաւօտը կանուխ նեղ ճանապարհով հասանք աղալերան ստորոտը, և սակաւ մի վեր ելնելով՝ ինն մեծդ բարձրութեամբ ահագին կամարն բացաւ առջևնիս ընդարձակ սրահ մի, բոլանդական ազի բրիւեղներէ ձևացած, որոյ մթին ծայրն կ'անհետանայր լերան խորերուն մէջ։ Ֆարրոխ բէկ Վեղիրովն, զոր ըստ արեւելեան սովորութեան մեր տերը կը կոչէինք, որ իւր ազնիւ հիւ-

digitised by A.R.A.R.@

բասիրութեամբն կ'առաջնորդէր մեզի 'ի տես նորանոր առարկայից, երբ սոյն տեղս հասանք, յանկարծ կանգ առաւ և ճարտասանօրէն արտասանեց մեր առջև յանպատրաստից համառօտ՝ այլ կարևոր նախագիտելի տեղեկութիւններ. «Սոյն փոսս, զոր տեսանել կը փափագիք, 150 մեթր խորութիւն ունի. վրան ծածկուած է հողով, ապա կը յաջորդէ կաւ, կրախառն կաւ, աղ, խառ մ'այլ գաճ և դարձեալ աղ. կալմութիւնն երրորդ կարգի է. խաւերուն հաստութիւն 20՝. Բոլոր այս փոսերս՝ 4 տարի առաջ Ռուսք փորեցին, բայց հիմայ անգործ թողուած են. իսկ պարսկական փոսերն աւելի վերերը կը գտնուին, որոց աղն վարդագոյն է».

Ոտն առ ոտն սկսանք յառաջ գնալ, և ահա ցուրտ և աղային օդն՝ պատեց զմեզ իւր խոնաւ ալիքներով, և կը գտնուէինք ընդարձակ սրահին մէջ, որ կառուցուած էր ամբողջապէս ծխագոյն բիւրեղով՝ իւր բովանդակ երկարութեամբը մինչտ դէպ 'ի վար հակելով. Սոյն սրահս կողմնակի դռներով կամ խուչերով կը հաղորդուի ուրիշ երկար սրահներու, այնպէս որ կը ձեւացնեն սրահից երկար շարքեր, և նախասացեալ փոսերն կը ծառայեն անոնց իրը լուսամուտ. Մեզ այնպէս կը թուէր, թէ կախարդի ձեռքով փոխադրուած էինք հեռի 'ի Հիւսիս, և թէ մեր տեղ ներքև եղանն աղ չէ, այլ դեռ նոր տեղացեալ ձիւն, այնպէս սպիտակ և ջինջ էր. իսկ փայլուն պատերը ձեւացած էին ցրտածին աղի սառոյցներով. Ցիրաւ սաստիկ ցուրտ էր. Զէինք յուսար այնպիսի բեւեռային կլիմայի պատահել, յետ Երասխածորին տապագին ջերմութեան, և յետ 50° կիզիչ տօթոյն՝ սոյն (4° Ռ.) սառնամանեաց փորձն առնուլ, որ տեղոյս մշտական բարեխառնութիւնն է.

Այն երեսէ թողուած բազմաթիւ սրահից հոգն ու խնամքը իւր վրայ առնելով մայր բնութիւնն, կը զանայր իւր բնական զարդերով և երևոյթներով պաճուճել զանոնք. Սպիտակ և ծովափրփուրի նման՝ հազարաւոր շըթաքարեր կը պճնէին բովանդակ ձեղունը, որք տարուէ տարի թանձրանալով և երկնցելով կարծես կը փութային շօշափել վարը իրենց սպասող պտկաքարերը. Բիւրեղաց ջինջ հատիկներն՝ որք նեղ նեղ սեղմուած էին փոքր խորշիկներու մէջ, կ'անդրադարձնէին իրենց մէջ ծիածանին գոյները, մրցելով իրենց յատկութեամբ և պայծառութեամբ՝ ձեղունէն կաթած ջրոյ շթերու հետ, նոյնպէս ևս կախուած կանանչափայլ ոստոց, տերևոց և ծաղկանց հետ, որք բիւրեղացած էին աղաջրոյ սառեալներն և բոլորովին թափանցիկ և պայծառ էին. Բարձր, հաստատուն և քառակուսի խարբսխով սիւներ վեր կը բռնէին վրանիս ճնշող լայն կամարները. «Ահաւասիկ ասիկայ իրը 2000 լիտր կը կշռէ», ըսաւ առաջնորդնիս՝ ցուցնելով առջևնիս կանգնած հսկայ սիւնն, «որ ամբողջապէս մաքուր և զուտ աղէ ձեւացեր է, և եթէ Պետերբուրգ լինէր՝ անտարակոյս իւր դինն 500,000 ռուբլի էր. իսկ հօս, ինչպէս արդէն կը տեսնիք, գրեթէ ամենևին արժէք չունի, վասն զի ահա չինութեան գործածուած է. Այն սեանց թիւն տեղոյս մեծութեան համեմատ խիստ սակաւ է, և ինչպէս կը տեսնէք՝ բոլորովին անկարգ. վասն զի սկիզբները երբ անկարգ և առանց մտանուրոյ ուղղութեան մի կը փորէին՝ միայն շահի նայելով, այսպիսի բաներ չդիտեցին. և այս պատճառաւ շատ փոսեր արդէն իսկ կործանեցան, և մնացելոց ևս՝ մօտ կամ՝ ուշ՝ նոյն կատարածը կը սպասէ».

Ապահովեալ մոմեղինօք՝ սկսանք վար իջնել, յետին ոգեղնը տալով արեւգական մեզմ՝ ճառագայթից՝ որք այլ ևս մեզ չընկերեցին, և մոմեղով սև կճեայ մխակտուր դռնէն, կը խարխափէինք խաւարի արձակ տեղութեան մէջ, ուր ամէն առարկայ յաւերժական աւագի մէջ էր. — Բովանդակ ոգն

digitised by A.R.A.R.@

լի էր աղային գոլորշեօք, որով յետ քանի մի վայրկենից՝ լեզուացա և շրջ-թանց վրայ զգայնիք ադին բարկ ազդեցութիւնը։ Շնչելով սոյն օդա՝ կ'ըսէինք. «Ո՛հ, երբ պիտի վերջանայ մթին բաւիղս և գուրս ելլինք, տեսանենք կապուտակ ծովու ընդարձակ տարածութիւնը, և ծծենք անոր մաքուր և առողջարար օդն։ Այլ ծովն մեզմէ շատ հեռի էր։ և փոխանակ անոր՝ սահաւասիկ մեր ոտից ներքև 'ի խորս ադի բաւղին կը ծածանէր լճակ մի ապիտակափայլ և փրփրալից ափերով, փայլելով իւր ջինջ սպիտակութեամբն։ Երբեմն կու գան հոս այցելուք, հրապուրեալ ջուրց պաղութենէն՝ որ տեղս ոչ-տաք յատկութիւնն է, և առողջարար զօրութենէն՝ որ ըստ բնակչաց վկայութեան ամէն հիանդութենէ կ'ազատէ։ Լճին ադի ջուրն այնքան թանձր է, որ եթէ մէկն ուզէ բաղանիք ընել կամ լողանալ, մարմինը վեր կը մղէ, որով և անկարելի կը լինի բոլորովին ջրոյն մէջ մտնել կամ ծածկուիլ. իսկ ադին կսկծեցուցիչ զօրութիւնն և ջրոյն պաղութիւնն այնքան սաստիկ են, որ ոչ ոք քանի մի մանրերկրորդ իսկ կարող է ներս կենալ։

Այս լճերս 'ի վաղուց հետէ միշտ եղեր են այս տեղերս, աղային մասերը թափանցող սաստիկ անձրևներէն ձևանալով, որք ոչ միայն օգուտ մի չեն բերած, այլ և մեծ վնաս պատճառեր են, կործանելով շատ հին սրահներ. և այն ժամանակէն մինչև մեր օրերը ոչ որ կրցեր է օգտակար ընել զանոնք։

Մօտերս տեղոյս պահապան կը դնեն ազատ զինուորական մի, որ դիպուածով կողք եկեր էր։ Այս մարդս մէկէն ընակութիւն հաստատելով իւր պաշտաման տեղը, սկսաւ մասնաւոր քննութիւններ ընել բաւղիս ամէն կողմերը. անգամ մը հանդիպելով լճերէս միոյն և համբ փորձելով, իսկոյն կը մտածէ օգտակար ընել զայն. գուրս կը վազէ և շուկայէն քանի մի սապատ վարունգ գնելով կը բերէ լճին մէջ կը լեցնէ, և ահա երեկոյեան ամէնքն այլ աքանչելի կերպով թթուեր էին. «Ո՛հ, կըսէ զինուորն ուրախացած, այս ինչ գեղեցիկ բան է, ոչ ամանի պէտք կայ, ոչ երկար աղելու՝ և ոչ ժամանակի կորուստ. լճին մէջ կը դնեմ վարունգ, հոգիս թէ կը գտնամ և ահա պատրաստ է համեղ թթուն»։— Շնչասպառ թողլով այն բաւիղը և գուրս ելնելով ապատ օդուն մէջ, ողջունեցինք նորէն կենսաբեր արևն, որուն ջերմութենէն և լուսէն առ վայր մի զուրկ մնացեր էինք։ Ապա գնացինք ուր աղիներտաքին և վերջերս սկսած աշխատութիւնն կը կատարուէր։

Սկզբան խաւէն գուրս ցցուած աղը կը խորտակէին բահիւք և երկաթի լծակներով. սկսելով երեսէն 2–3 լիտր ծանրութեամբ զանգուածներ կը կտրէին, որոյ համար, ինչպէս ճանապարհորդ մի կը խորհրդածէ, աշխատաւորներն շատ սյժ և ճարտարութիւն կը ցուցընէին։ Ապաջ կ'երթային միշտ խաւին ուղղութեամբ դէպ 'ի ներս՝ ճամբուն վրայ յենարաններ թողլով, և երբ մութը կը կոխէր՝ կը թողուին աշխատութիւնը. բայց վերջը ջուրն ժողվելով և կամ փոսի բերնէն շատ հեռանալով անտանելի կըլլար գտածնին մինչև վար բերել։ Իսկ ներկայ ժամանակիս մէջ մասամբ մի գարման գտնուեցաւ այսպիսի դժուարութեանց, և լեռնային վարչութիւնն որոշեց, որ մեկերևութային աշխատութեամբ առաջ երթան, որ ուրիշ բան չէ՝ բայց եթէ վերէն մինչև վար կարգաւ խաւերը վերցնել, ուստի և բոլոր գործողութիւնն արտաքուստ ըլլալով, կարելի կ'ըլլայ ուզած մեծութեամբ զանգուածներ ստանալ, փոխանակ փոքրիկ բեկորներու՝ որ աւելի նուազ արժէք ունին։ Բուն տեղը հատորաւոր ադի իւրաքանչիւր լիտրն 10 կոպէկ կ'արժէ, իսկ բեկորներու մի լիտրն 5 կոպէկ։

digitised by A.R.A.R.@